ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 24.06.2019թ.

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի
թիվ ՍՑ-ՆԳ-2019/61

Հայաստանի Հանրապետության գնումների հետ կապված բողոքներ քննող անձը՝ ի դեմս Գրիգոր Ներսիսյանի,

Մասնակցությամբ՝ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացուցիչ

Հ. Օհանյանի (լիազորագիր, տրված՝ 06.06.2019թ.)

ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8688-2019 գրությամբ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը՝ պարզեցի հետևյալը.

1. <u>ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը.</u>

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի (հետայսու նաև՝ Պատվիրատու) 30.04.2019թ. թիվ 01/04/2019 և 20.05.2019թ. թիվ 02/05/2019 գրությունների հիման վրա, 24.05.2019թ. թիվ 26/26-1/8688-2019 գրությամբ դիմել է ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձին՝ խնդրելով

նախաձեռնել «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ին (հետայսու նաև՝ Ընկերություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգ:

2. <u>«Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

«Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/61 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, ապահովել է իր ներկայացուցչի մասնակցությունը, ով հայտնել է, որ ըստ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվության՝ Ընկերությունը վերահսկվող եկամուտների գծով ունի 18 100 ՀՀ դրամ ժամկետանց պարտավորություն, որի պատճառով Ընթացակարգի գնահատող հանձնաժողովը մերժել է Ընկերության հայտը:

Միաժամանակ հայտնել է, որ Ընկերությունն ունի դրոշմանիշային վճարի գծով պարտավորություն, որի մասին Ընկերությունը տեղեկացված չի եղել, քանի որ նշված պարտավորությունը չի արտացոլվել Ընկերության անձնական հաշվի քաղվածքի տվյալներում:

3. <u>Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից ներկայացված փաստարկները և դիրքորոշումը.</u>

Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ը ՀՀ ֆինանսների նախարարությանն ուղղված 30.04.2019թ. թիվ 01/04/2019 և 20.05.2019թ. թիվ 02/05/2019 գրություններով ներկայացրել է «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հիմքերը:

Պատվիրատուն, պատշաճ ծանուցված լինելով ՍՑ-ՆԳ-2019/61 ընթացակարգի շրջանակներում 06.06.2019թ. ժամը 10:45-ին հրավիրված նիստի վերաբերյալ, չի ապահովել իր ներկայացուցչի մասնակցությունը:

4. <u>ՍՑ-ՆԳ-2019/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

ՍՑ-ՆԳ-2019/61 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը.

1. Պատվիրատուի կողմից Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կարիքների համար հայտարարվել է «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՇԻՆ-19/2» ծածկագրով գնքանշման հարցման ընթացակարգ, որին մասնակցելու նպատակով 16.04.2019թ. հայտ է ներկայացրել «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն:

2. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2 արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 1-35-րդ չափաբաժինների մասով «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

3. ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի <u>18 100</u> ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

4. Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

<u>5. ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը.</u>

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ Գրիգոր Ներսիսյանս, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8688-2019

գրությունը, Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի 30.04.2019թ. թիվ 01/04/2019 և 20.05.2019թ. թիվ 02/05/2019 գրությունները՝ կից փաստաթղթերով, հայտնում եմ հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (հետայսու նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ բացառությամբ նույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում: Մասնակիցն ընդգրկվում է նշված ցուցակում, եթե ՝

ա. խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը,

բ. որպես ընտրված մասնակից հրաժարվել է պայմանագիր կնքելուց,

գ.հայտերը բացելուց հետո հրաժարվել է գնման գործընթացին հետագա մասնակցությունից:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասը սահմանում է, որ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում գնումների հետ կապված բողոքներ քննող մարմնում՝ առանց վճարի: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը սույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին սույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

«ՀՀ պաշտպանության ժամանակ զինծառայողների կյանքին կամ առողջությանը պատճառված վնասների հատուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն՝ դրոշմանիշային վճարը զինծառայողների կյանքին և առողջությանը պատճառված վնասների հատուցումն ապահովելու նպատակով սույն օրենքով սահմանված կարգով և

չափով ՀՀ պետական բյուջե վճարվող պարտադիր վճար է, որի վճարման պարտականությունը կատարվում է յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում սույն օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված չափով դրոշմանիշ գնելու միջոցով:

«Հարկային ծառայության մասին» ՀՀ օրենքի 4-րդ հոդվածի համաձայն՝ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտները՝ ՀՀ պետական և համայնքների բյուջեներ վճարվող հարկերի, տուրքերի և օրենքով սահմանված վճարների, դրանց նկատմամբ օրենքով սահմանված կարգով հաշվարկվող տույժերի և տուգանքների ամբողջությունն է, որոնց հաշվառումը, հաշվառման և (կամ) վճարման նկատմամբ հսկողությունը, մուտքերի ապահովման վերահսկողությունն օրենսդրությամբ վերապահված է հարկային մարմնին:

«ՀՀ բյուջետային համակարգի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 2-րդ մասի ժե) պարբերության համաձայն՝ հարկային եկամուտներն են՝ դրոշմանիշային վճարները:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (հետայսու նաև՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի համաձայն՝ հրավերով նախատեսվում է նաև, որ մասնակիցը հայտով ներկայացնում է՝ իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում ստանձնված պարտավորության խախտում:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն

զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ Կոմիտեն սույն կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվանից երեք աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային փոստի միջոցով տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Սույն կետով սահմանված ժամկետում կոմիտեից տեղեկատվության չստացման դեպքում մասնակցի ներկայացրած հայտարարությունները համարվում են իրականությանը համապատասխանող: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից: Սույն կետով նախատեսված որակավորման չափանիշի գնահատման ժամանակ հաշվի է առնվում սույն կարգի 47-րդ կետով նախատեսված ընթացակարգը:

Աշտարակ քաղաքային համայնքի «Բարեկարգում» ՀՈԱԿ-ի կողմից կազմակերպված «ՀՀԱՄԱԲԳ-ԳՀԱՊՁԲ-ՇԻՆ-19/2» ծածկագրով գնքանշման հարցման ընթացակարգի մասնակից «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն 16.04.2019թ. հայտ է ներկայացրել և Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 16.04.2019թ. ժամը 11:00-ի նիստի թիվ 2

արձանագրությամբ կայացված որոշմամբ՝ 1-35-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցրած մասնակից:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ կառավարության 04.05.2017թ. թիվ 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 44-րդ կետի հիման վրա 22.04.2019թ. տրամադրված եզրակացության համաձայն՝ ***«Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունի <u>18 100</u> ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն:***

Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 23.04.2019թ. ժամը 10:30-ի նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի հայտը մերժվել է:

Այսպիսով՝ «Ընկերությունը «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/45» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով հայտարարել և հավաստել է, որ բավարարում է Ընթացակարգի հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին, մինչդեռ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված եզրակացության համաձայն՝ Ընկերության հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորության չափը գերազանցել է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ մասով նախատեսված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը:

Ընկերությունը Գնումների հետ կապված բողոքներ քննող անձին ներկայացրել է ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 11.06.2019թ. թիվ 633 տեղեկանքը, որի համաձայն՝ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի դրոշմանիշային վճարի մասով պարտավորությունը 01.11.2018թ. դրությամբ կազմում է ***<u>18 000</u>*** ՀՀ դրամ:

Այսպես՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեն 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությամբ հայտնել է, որ ՊԵԿ «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգի» «Հարկային պարտավորություններ» բաժնում 2018թ. նոյեմբեր ամսից տեղադրված է հետևյալ հաղորդագրությունը՝

«Սույն քաղվածքում դրոշմանիշային վճարների գծով պարտավորությունների կամ սահմանված չափից ավել վճարված գումարների վերաբերյալ տեղեկությունները

արտացոլված չեն: Նշված տեղեկությունները ստանալու համար անհրաժեշտ է դիմել սպասարկման բաժին»:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ Ընկերության մոտ 18 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի գծով ժամկետանց պարտավորությունը, համաձայն ՀՀ պետական եկամուտների կոմիտեի վերոհիշյալ գրության առաջացել է 01.11.2018թ. դրությամբ, ինչպես նաև հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի 10.05.2019թ. թիվ 3-4/17950-2019 գրությունը, *գտնում եմ, որ մինչև 01.11.2018թ. ընկած ժամանակահատվածն Ընկերությունը առաջնորդվել է հարկային մարմնի տեղեկատվական բազայում առկա անձնական հաշվի քարտում արտացոլված տեղեկատվությամբ՝ իրազեկված չլինելով 18 000 ՀՀ դրամի չափով դրոշմանիշային վճարի մասով առկա պարտավորության վերաբերյալ:*

Ինչ վերաբերվում է 100 ՀՀ դրամի մասով առկա պարտավորությանը, ապա արձանագրում եմ, որ այն գերազանցում է 5-ից-10-րդ, 13-ից-16-րդ, 19-րդ, 20-րդ, 28-րդ և 29-րդ չափաբաժինների մասով Ընկերության կողմից ներկայացված գնային առաջարկի մեկ տոկոսի շեմը (նվազագույնը՝ 8-րդ, 16-րդ, 20-րդ չափաբաժիներ՝ 1200 ՀՀ դրամ, առավելագույնը՝ 13-րդ չափաբաժին՝ 9800 ՀՀ դրամ)

«Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ բացառությամբ սույն օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին, 3-րդ, 4-րդ և 5-րդ կետերով նախատեսված ընթացակարգով գնում կատարելու դեպքերի, ***գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք***, ***որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ*** հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ***ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը***, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը ***գերազանցող ժամկետանց պարտավորություններ:***

Այսպիսով, Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ ***մասնակիցը ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորություն, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:***

Միաժամանակ Կարգի 32-րդ կետի 20-րդ ենթակետի համաձայն՝ ***եթե մասնակցի՝ հրավերով նախատեսված գնումներին մասնակցելու իրավունք ունենալու*** և (կամ) որակավորման չափանիշները բավարարելու մասին հայտով ներկայացված ***հայտարարությունները որակվում են որպես իրականությանը չհամապատասխանող*** կամ մասնակիցը կամ առաջին տեղ զբաղեցրած մասնակիցը հրավերով սահմանված կարգով և ժամկետներում չի ներկայացնում հրավերով նախատեսված փաստաթղթերը***, ապա այդ հանգամանքը համարվում է որպես գնման գործընթացի շրջանակում սպանձնված պարտավորության խախտում:***

Ելնելով վերոգրյալից, գտնում եմ, որ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ի կողմից մասնակցության հայտի թիվ 2 հավելվածով ներկայացված հայտարարությունը՝ մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասով, հանդիսանում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի խախտում, քանի որ վերջինս հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ունեցել է 100 ՀՀ դրամի չափով ժամկետանց պարտավորություն, որը գերազանցում է «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետով նախատեսված շեմը:

Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ անձը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 24.05.2019թ. թիվ 26/26-1/8688-2019 գրությամբ «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել և «Տերտերյան և ընկերներ» ՍՊԸ-ին

ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն ուժի մեջ մտնելու օրվանից հաշված երկու տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումն իրավապարտադիր է և ուժի մեջ է մտնում տեղեկագրում հրապարակվելու հաջորդ օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի որոշումը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

Գնումների հետ կապված բողոքներ քննող անձ՝ **ԳՐԻԳՈՐ ՆԵՐՍԻՍՅԱՆ**